ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի
մարզի Արարատ համայնք, Ք. Արարատ,
Շահումյան 34, Հեռ. (0234)44747, Ֆաքս
(0234)44747 , ararat.ararat@mta.gov.am

N 0086

21 փետրվար 2017թ.

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

ՀՀ բնապահպանության
նախարարության աշխատակազմի
ընդհանուր բաժին
Մուտք № 4916
«01» 03 2017թ.

Հարգարժան պարոն Մինասյան

Արարատ քաղաքն ի սկզբանե ունեցել է և այժմ էլ շարունակում է ունենալ բնապահպանական լուրջ խնդիրներ:
Քաղաքի վարչական տարածքում գործող ձեռնարկություններից ցեմենտի («Արարատցեմենտ» ՓԲԸ), ասբոիրերի (‹‹Կավաշեն» ՍՊԸ) գործարանները, ոսկու կորզման ֆաբրիկան (‹‹Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ) իրենց արտադրական գործունեության հետևանքով բացասաբար են ազդում քաղաքի օդային ավազանի և շրջակա միջավայրի պահպանության վրա, որի համար ՀՀ Պետբյուջե բնապահպանական վճարներ են վճարում:
Սակայն այդ ձեռնարկությունների ՀՀ Պետբյուջե վճարած բնապահպանական վճարներից Արարատի քաղաքային համայնքին մասհանում է կատարվում միայն ‹‹Արարատցեմենտ» ՓԲ և ‹‹Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊ ընկերությունների վճարներից: ‹‹Կավաշեն» ՍՊ ընկերության վճարներից համայնքին մասհանում չի կատարվում, քանի որ այն ներառված չի ‹‹Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում: Դա այն դեպքում, երբ ասբոիրերի արտադրության գործարանը ևս իր արտադրական գործունեությունով բացասաբար է ազդում քաղաքի շրջակա միջավայրի պահպանության վրա: Արտադրության և սպառման թափոնները տեղակայվում են գործարանի մերձակա տարածքում, կեղտաջրերը հեռացվում են բաց դրենաժային համակարգով: Հայտնի է, նաև որ ասբեստը պարունակում է վնասակար, նյութեր: Ավելին, ըստ մասնագետների, այն ունի նաև քաղցկեղածին վտանգավոր հատկություն:
Թեև նախորդ տարիներին այս նույն հիմնավորումներով համայնքապետարանը դիմել է հանրապետության վերադաս մարմիններին «Կավաշեն» ՍՊԸ-ն ՀՀ վերոհիշյալ օրենքի առաջին հոդվածում ներառելու խնդրանքով և ստացվել են դրական պատասխաններ, սակայն մինչ այժմ այն իր լուծումը չի ստացել: /Համապատասխան փաստաթղթերի

լուսապատճենները կցվում են/:
Հարգարժան պարոն նախարար
Արարատ քաղաքի բնակչության և քաղաքային իշխանության անունից խնդրում եմ Ձեր անմիջական աջակցությունը ‹‹Կավաշեն» ՍՊ ընկերությունը ներառելու ‹‹Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում:

Կանխավ շնորհակալություն

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ԿԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Մ. Խաչատրյան
(0234) 4-28-92

ՔԱՂՎԱԾՔ

Արարատ քաղաքային համայնքի ավագանու 2011թ.
մարտի 18-ին կայացած թիվ 2 հերթական նիստի թիվ 10 որոշումից

<< ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ>> 2001Թ. ՄԱՅԻՍԻ 15-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀՀ ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ <<ԿԱՎԱՇԵՆ>> ՍՊԸ-Ն ՆԵՐԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնկառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. <<Կավաշեն>> ՍՊԸ –ի կողմից վճարվող բնապահպանական վճարներից Արարատի քաղաքային համայնքին մասհանումներ կատարելու հարցը լուծելու նպատակով, ուղերձով դիմել ՀՀ ազգային ժողովի նախագահ Հ. Աբրահամյանին: / Հավելված 2, կցվում է/:

Իսկականի հետ միշտ է՝
Աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյան

Հավելված 2

Հաստատված է համայնքի ավագանու

18.03.2011թ. թիվ 2 նիստով

<<ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ>> 2001Թ. ՄԱՅԻՍԻ 15-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀՀ ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ԱՐԱՐԱՏԻ <<ԿԱՎԱՇԵՆ>> ՍՊԸ-Ն ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Պ-Ն Հ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<u>ՈՒՂԵՐՁԸ</u>

Մեծարգո պ-ն Աբրահամյան

Արարատի քաղաքային համայնքը հետևողական աշխատանք է տանում քաղաքի էկոլոգիական համակարգի խնդիրների լուծման ուղղությամբ:

Վերջին տարիներին փողոցների ասֆալտապատման, մայթերի սալիկապատման և կանաչ տարածքների ավելացման շնորհիվ որոշակիորեն բարելավվել է օդային ավազանի օդի որակը: Հոգ է տարվել կանաչ տարածքների պահպանման ու ընդլայնման ուղղությամբ:

Քաղաքի բարեկարգման ու վերանորոգման ուղղությամբ տարված մյուս աշխատանքները կատարվում են բացառապես տեղական բյուջեի սեփական եկամուտների ապահովման շնորհիվ: Բնակչությունը քաջատեղյակ է, որ իրենց վճարած հարկերը ամբողջովին ուղղվում են համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը:

Հարգարժան պ-ն Աբրահամյան

Քաղաքի էկոլոգիական խնդիրների լուծմանը զգալիորեն նպաստում են նաև << Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> 2001թ. մայիսի 15-ին ընդունված ՀՀ օրենքի առաջին հոդվածում ընդգրկված <<Արարատցեմենտ>> ՓԲԸ և <<ԳեոՊրոմայնինգ Գոլդ>> ՍՊԸ կողմից վճարված բնապահպանական վճարներից Արարատի քաղաքային համայնքին կատարված մասհանումների շնորհիվ:

Մասնավորապես, այդ վճարների հաշվին ձեռք է բերվել մեկ բազմաֆունկցիոնալ ջրցան մեքենա, որով օրը երկու անգամ ջրցանվում են

քաղաքի փողոցները, ջրվում են ոռոգման ջրից զուրկ փոքր տարածքներն ու ծառերը:

Այդ միջոցների հաշվին ծավալուն աշխատանք է տարվել աղբավայրում, մինչև այժմ հանգստի վայրից զրկված ՈԿՖ-ի բանավանում կառուցվել է հանգստի պուրակ:

Ձեռք է բերվել և քաղաքային հիվանդանոցին նվիրաբերվել քաղաքի էկոհամակարգի անբարենպաստ ազդեցության հետևանքով բնակչության մոտ առաջացած հիվանդությունների արագ հետազոտման ու ախտորոշման համար մեծ կարևորություն ունեցող երկու սարքավորում:

Ըստ էության բնապահպանական վճարներից համայնքին կատարված մասհանումների շնորհիվ բնակչության առողջության պահպանման ուղղությամբ զգալի հարցեր են լուծվում:

Սակայն քաղաքի վարչական տարածքում գործող <<Կավաշեն>> ՍՊԸ-ն, որն ամենամեծ բնապահպանական վճար վճարողն է, ներառված չէ ՀՀ վերոհիշյալ օրենքի առաջին հոդվածում և նրա վճարած բնապահպանական վճարներից Արարատի քաղաքային համայնքին մասհանում չի կատարվում:

Այդ հարցով համայնքի ավագանին և քաղաքապետը խնդրանքով դիմել են ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը, ՀՀ բնապահպանության նախարարությանը և ՀՀ Արարատի մարզպետին: ՀՀ բնապահպանության նախարարին հասցեագրած քաղաքապետարանի 18.03.2008թ. գրությանը տրված նախարարության 01.04.2008թ. պատասխանում նշված էր, որ քաղաքապետարանի համաձայնության դեպքում գտնում ենք նպատակահարմար ընկերությունների վերոգրյալ ցանկում <<Կավաշեն>> ՍՊԸ-ի ներառումը: / ՀՀ բնապահպանության նախարարության 01.04.2008թ. թիվ 5-11/357 գրության պատճեն կցվում է/:

Քաղաքապետարանը շնորհակալությամբ ընդունեց այն և անմիջապես այդ մասին գրավոր տեղեկացրեց ՀՀ բնապահպանության նախարարությանը:

Սակայն հարցը այդպես էլ դեռևս չի լուծվել:

Մեծարգո Հովիկ Արզամի.

Խնդրում ենք Ձեր հանձնարարությունը ՀՀ բնապահպանության նախարարությանը՝ քաղաքապետարանին տրված իրենց կից ներկայացվող պատասխանին համապատասխան ընթացք տալ հարցի լուծմանը:

Կանխավ շնորհակալություն:

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
էլ.փոստ /E-mail/ эл.почта: e.pirumyan@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 10) 58 54 19
(374 10) 54 08 57

№ 5/01/51229
«11» 05 2011թ

Արարատի քաղաքապետ
պարոն Ա. Բաբայանին

Հարգելի պարոն Բաբայան

Ի պատասխան Ձեր 05.04.2011թ N 2011/0173՝ ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանին հասցեագրված գրության հայտնում եմ, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը նախատեսում է 2011 թվականի 3-րդ եռամսյակում սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնել <<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը: Այդ լրացումների շրջանակներում նախատեսվում է վերը նշված օրենքի 1-ին հոդվածով ամրագրված ընկերությունների ցանկում ներառել նաև <<Կավաշեն>> ՍՊ ընկերությունը:

Հարգանքով՝

Է. Փիրումյան

12.05.11թ

Ա. Հարությունյան
56-75-35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
MINISTER
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МИНИСТР

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 10) 52 10 99
(374 10) 54 08 57

№

<< >> _____ 2011թ.

ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային
կառավարման նախարար
պարոն Ա. Գևորգյանին

Հարգելի պարոն Գևորգյան

Ի կատարումն Ձեր 21.11.2011թ. N01/15/7383-11 հանձնարարականի հայտնում եմ, որ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվել է <<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, համաձայն որի օրենքի 1-ին հոդվածում կատարված փոփոխություններով ընդլայնվել է նաև ընկերությունների շրջանակը, որոնց կողմից վճարվող բնապահպանական (բնօգտագործման) վճարներից մասհանումներ են կատարվում ազդակիր համայնքներին: Նշված ընկերությունների ցանկում ներառվել է նաև <<Կավաշեն>> ՍՊԸ: Վերոնշյալ օրենքի նախագիծը առաջիկա ամսվա ընթացքում կներկայացվի քննարկման համապատասխան լիազոր մարմիններին:

Միաժամանակ հայտնում եմ, որ Արարատի քաղաքային համայնքին ՀՀ 2011թ. պետական բյուջեով նախատեսված չէ սուբվենցիայի տրամադրում՝ բնապահպանական ծրագրի իրականացման նպատակով:

Հարգանքով՝

Ա. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD OF STAFF
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

[illegible] 3-րդ տուն
[illegible] Yerevan, 0010, Armenia
[illegible] հասցե N3
[illegible] head_administration@mnp.am

№ _____

«___» _____ 200[illegible]

Արարատի քաղաքապետ
պրն. Ա. Բաբայանին

Հարգելի պարոն Բաբայան

Ի պատասխան Ձեր 18.03.2008թ. N 2007/0138-01, 11.03.2008թ. գրության հայտնում եմ, որ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ուսումնասիրվել է վերոգրյալ գրությունում նշված՝ Արարատ քաղաքի շրջակա միջավայրն աղտոտող ձեռնարկությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների ծավալների դինամիկան /բացվածքը կցվում է/:

Հաշվի առնելով վերոգրյալ տեղեկատվությունը և այն հիմնարար սկզբունքը կան մոտեցումը («Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում ներառվում են տարեկան կտրվածքով առնվազն 100.0 հազ. դրամ բնապահպանական վճար վճարող ձեռնարկությունները), որը դրված է վերոգրյալ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների ցանկի ձևավորման հիմքում, գտնում ենք նպատակահարմար ընկերությունների վերոգրյալ ցանկում «Կավաշեն» ՍՊԸ-ի ներառումը:

Ձեր համաձայնությամբ այդ առաջարկությունը կներառվի ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» No 1440-Ն որոշմամբ հաստատված Ցանկի 117-րդ կետի կատարման շրջանակներում մշակվելիք «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքներով

Ս. Ամիրխանյան

Ա. Հալությունյան
56-75-35

0000126